

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշոտ Խաչատուրի Մարկոսյան
Էլյանորա Նորայրի Մաթևոսյան

Հոդվածը ստացվել է՝ 10.10.23, ուղարկվել է գրախոսման՝ 21.10.23, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Ներածություն: Ժամանակակից համաշխարհային տնտեսության բնորոշող գիծը, որը հատկապես ակնհայտ դարձավ սկսած 1970-ական թվականներից, ազգային տնտեսությունների խորը և համապարփակ ինտեգրումն ու տնտեսական համագործակցությունն է: Այս երևույթն առավել մեծ ծավալներ ստացավ 1990-ական թվականների սկզբից, երբ համայնավարական հասարակարգը և նրա «միջնաբերդը» հանդիսացող Խորհրդային Միությունը հեռացան պատմական թատերաբեմից: Նախկին համայնավարական գրեթե բոլոր հանրապետությունները հոչակեցին իրենց քաղաքական անկախության մասին և անցում կատարեցին շուկայական տնտեսության: Սկսվեց «մեծ անցումը» սոցիալիզմից դեպի կապիտալիզմ, ինչը դեռևս չի կարելի համարել ավարտված, և Հայաստանի Հանրապետությունը, որպես այդ գործընթացում ներառված երկիր, հայտնվեց բարդ քաղաքական ու տնտեսական պայմաններում: Ե՛վ գործընթացի սկզբում, և՛ ներկայումս արտաքին տնտեսական կապերի իրականացումը, նախկին գործընկերների պահպանումը ու նորերի ձեռքբերումը՝ ելնելով տնտեսական արդյունավետության պահանջներից, մնում են մեր երկրի տնտեսության համար կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Նշված խնդիրների լուծումը հրատապ և արդիական են հատկապես փոքր և բաց, սահմանափակ ներքին շուկա, ցածր գնողունակ պահանջարկ ունեցող երկրների համար, որոնց թվին է դասվում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Թեև ՀՀ կառավարության բոլոր ծրագրերում արտաքին տնտեսական քաղաքականության ռազմավարությունը կառուցվել է ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի ապահովման սկզբունքով, սակայն, ինչպես վկայում է անցած տարիների շուրջ 30-ամյա փորձը, այդ սկզբունքը չի իրացվել ամբողջությամբ: ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը անցած ողջ ժամանակահատվածում, բացառությամբ 2022թ.-ի, եղել բացասական, դրանով իսկ կաշկանդելով հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ու տնտեսական աճի ապահովման հնարավորությունները: Նշվածով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում արտաքին տնտեսական գործունեության իրականացման երկարաժամկետ արդյունքները՝ վերլուծելով վճարային հաշվեկշռի և դրա հաշիվների իրավիճակը և դինամիկան, ինչպես

նաև ամփոփումներ ներկայացնել ՀՀ արտաքին տնտեսական գործունեության ռազմավարական նպատակների բարելավման վերաբերյալ: **Հետազոտության խնդիրն է՝** ուսումնասիրել ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքի և ծավալների ցուցանիշների դինամիկան, բացահայտել արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ պատճառները, պարզել ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի հնարավորությունները:

Հետազոտության թեմային անդրադարձել են բազմաթիվ հայրենական և արտասահմանյան հեղինակներ, սակայն արտաքին տնտեսական գործունեության արդյունքները դիտարկվել են գերազանցապես ապրանքների ու ծառայությունների արտահանման և ներմուծման տեսանկյունից: Մինչդեռ ՀՀ վճարային հաշվեկշռի և դրա առանձին հաշիվների ուսումնասիրության խորքային վերլուծությունները հազվադեպ են և կրում են տեսական բնույթ:

Գրականության վերլուծություն: Վճարային հաշվեկշիռը մշտապես եղել է տնտեսագետների և հետազոտողների ուշադրության կենտրոնում, իսկ դրա դերը առաջնային է համարվել տնտեսագիտական տարբեր բանավեճերի ժամանակ: Ըստ որում, տնտեսական քաղաքականության մշակման և հատկապես երկրի տնտեսության ռազմավարական ուղղությունների զարգացման գործում առանձնապես կարևոր է եղել վճարային հաշվեկշռի և նրա արդյունքների կիրառումը արտաքին տնտեսական քաղաքականության ձևավորման և գործընկերային հարաբերությունների կազմավորման ժամանակահատվածում: Այսպես՝ վճարային հաշվեկշռի էվոլյուցիայի վերաբերյալ ամենավաղ աշխատանքը կարելի է գտնել Ջ.Քեյրնսի աշխատությունում, որտեղ քննարկվում են Միացյալ Թագավորության վճարային հաշվեկշռի կառուցվածքը և ձևավորման փուլերը: Քեյրնսը Միացյալ Թագավորության փորձից բացահայտեց տնտեսական աճի և վճարային հաշվեկշռի փոխկապակցվածությունը դեռևս 1870-ական թվականներին և եկավ այն եզրակացության, որ երկրի վճարային հաշվեկշիռը տնտեսական առաջընթացի գործընթացում փոփոխվում է ապահովելով երկրի վճարային հաշվեկշռի դրական հաշվեմնացորդը¹: Այնուհետև Պ.Սամուելսոնը հաստատեց և հարստացրեց Ջ.Քեյրնսի տեսակետը՝ հիմնվելով մի շարք զարգացած տնտեսությունների փորձի ուսումնասիրության վրա: Նա առաջարկեց վճարային հաշվեկշռի չորս փուլային վարկածը, ըստ որի երկիրը կանցնի չորս փուլով, քանի որ նրա եկամուտը շարունակում է աճել. երիտասարդ և աճող պարտապան երկրներ, հասուն պարտապան երկրներ, նոր վարկատու երկրներ և հասուն վարկատու երկրներ²: Ջ.Քրոութերը հետազայում չորս փուլերը ընդլայնեց վեց փուլերի՝ չհասունացած պարտապան-վարկառու, հասուն պարտապան-վարկառու, պարտա-

¹ J.E.Cairnes, Some leading principles of political economy newly expounded, New York: Harper and Brothers, 1874, pp 421.

² Samuelson, P. A. Economics: An Introductory Analysis, 1st ed. New York: McGraw-Hill. 1948.

պան-վարկատու, չհասունացած պարտատեր-վարկատու, հասուն վարկատու-վարկատու և պարտատեր-վարկառու երկրներ¹:

Ժամանակակից հեղինակների կողմից վճարային հաշվեկշիռը դիտարկվել է որպես արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման միտումները որոշելու կառուցակարգ և երկրի տնտեսության մակրոտնտեսական հաշվեկշռի ցուցիչ: Մասնավորապես, նրանց հետազոտության նպատակն է եղել Ռուսաստանի Դաշնության վճարային հաշվեկշռի վիճակի ուսումնասիրությունը և վերլուծությունը, որի արդյունքում բացահայտվել են Ռուսաստանի դիրքերը BRICS-ի երկրների շարքում, առանձնացվել են 2013-2017 թվականների վճարային հաշվեկշռի հիմնական բաղադրիչները, ինչպես նաև հիմնավորվել է վճարային հաշվեկշռի դերը՝ որպես ազգային տնտեսության համար մակրոտնտեսական կայունացման ծրագրերի մշակման անհրաժեշտ մոդել:

Հեղինակները եզրակացնում են, որ վճարային հաշվեկշիռը ագրեգացված մոդել է, և այն արտահայտում է երկրի մակրոտնտեսական հավասարակշռությունը և դրանով իսկ հիմք է հանդիսանում երկրում գնաճի տեմպերի և զբաղվածության մակարդակի ձևավորման համար²:

Վճարային հաշվեկշռի կազմման, ձևավորման և մեթոդաբանական հիմնադրույթները և դրանց գործնական կիրառումը իրականացվել է և ներկայումս էլ իրականացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված ձեռնարկների հիման վրա, և համահունչ է ԱՄՀ կողմից հրատարակված «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի 6»-րդ ձեռնարկի (2009թ.) մեթոդաբանությանը³:

Մեթոդաբանություն: Սույն հոդվածի համար տեսա-մեթոդական հիմք են հանդիսացել արտասահմանյան դասական գիտնականների և ժամանակակից հետազոտողների աշխատությունները, միջազգային կազմակերպությունների կողմից մշակված և կիրառվող ստանդարտները, մեթոդական փաստաթղթերը: Վերլուծությունն իրականացվել է մակրոտնտեսական ցուցանիշների երկարա-ժամկետ դինամիկայի շարքերի կազմման և վերլուծության հիման վրա:

¹ Geoffrey Crowther, Balances and Imbalances of Payments, Boston, Mass.: Harvard University Graduate School of Business Administration, 1957, pp. vii, 70.

² Никитина М.Г., Буценко И.Н., Селюнина В.С. «Платежный баланс как механизм определения тенденций развития внешнеэкономических связей и индикатор макроэкономического равновесия экономики России», էլեկտրոնային ռեսուրսը 10.10.2023թ. դրությամբ առկա է <https://cyberleninka.ru/article/n/platezhnyy-balans-kak-mehanizm-opredeleniya-tendentsiy-razvitiya-vneshneekonomicheskikh-svyazey-i-indikator-makroekonomicheskogo/viewer> հղմամբ:

³ Руководство по платежному балансу и международной инвестиционной позиции. Шестое издание (РПБ6), МВФ, 2009, 440 стр. էլեկտրոնային ռեսուրսը 10.10.2023թ. դրությամբ առկա է <https://www.imf.org/external/russian/pubs/ft/bop/2007/bopman6r.pdf> հղմամբ:

Վերլուծություն: Ներկայումս «մաքուր» սոցիալիստական երկրներ մնացել են միայն Կուբան և Հյուսիսային Կորեան, որոնց տնտեսակարգի փոփոխությունը, կարծում ենք, միայն ժամանակի հարց է¹: Վերափոխումների ընթացակարգի ժամանակ, երբ նախկին համայնավարական համակարգը աստիճանաբար սկսեց ինտեգրվել համաշխարհային տնտեսության ոչ սոցիալիստական հատվածին և ինտենսիվացան առևտրատնտեսական հարաբերությունները, պարզ դարձավ, որ այն կապիտալիստականի համեմատությամբ պարզապես անարդյունավետ է: Համաշխարհային ասպարեզում «սոցիալիզմ-կապիտալիզմ» մրցակցությունը հոգուտ վերջինիս էր, ինչը բազմաթիվ այլ պատճառների շարքում պայմանավորված էր նաև տնտեսական հանգամանքներով, որի միջուկն այն էր, որ սոցիալիզմը չկարողացավ ստեղծել արդյունավետ աշխատանքի գործուն խթաններ, մոտիվացիոն ներուժ ունեցող կառուցակարգեր, որոնք կապահովեին յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի արդյունավետությունն իր աշխատատեղում: Կամ, այլ կերպ՝ «Արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանության մասին» օրենքը (ավելի պարզ ասած, այդ օրենքի իմաստն այն է, որն, ի դեպ, համընդհանուր տնտեսական օրենք է, որ աշխատողն ունի բավարար նյութական և հոգևոր խթաններ ու ցանկություն արդյունավետ աշխատելու և արարելու համար) գործեց մասամբ, ոչ լիարժեք, ինչն էլ ճակատագրական եղավ համայնավարության համար:

Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ նախկին վարչապետ Հ. Բագրատյանի տեսակետը. «Ավանդական տնտեսագիտական գիտելիքները, որոնք հենվում են երկու հիմնական գիտաճյուղերի (դիսցիպլինների)՝ ժամանակակից միկրո- և մակրո-տնտեսագիտությունների վրա, հնարավորություն չեն տալիս ձևակերպելու ազգային տնտեսությունների կայուն զարգացման լուծումների հստակ հավաքակազմ: Խնդիրն այն է, որ տնտեսական գլոբալիզմի զարգացումը առաջին անգամ բերել է այն իրավիճակին, երբ ձևավորվել են համաշխարհային պայմաններ ոչ միայն ապրանքների և ծառայությունների առաջարկի ու պահանջարկի հավասարակշռության, այլ նաև ռեսուրսների (նկատի ունենք արտադրության գործոնները՝ հողը, աշխատանքը, հանքային հումքը, կապիտալը, նորամուծությունները) համար:

Այդ ամենի արդյունքում ձևավորվեցին ռեսուրսների առաջարկի և պահանջարկի համաշխարհային (մեգատնտեսական) կորերը:

Իրադրությունը տնտեսագիտության մեջ հիշեցնում է անցյալ դարի 30-ական թվականները, երբ հանկարծ պարզվեց, որ տնտեսագիտությունը, որպես այդպիսին չկա, այլ կա միկրոտնտեսագիտություն և մակրոտնտեսագիտություն:

¹ Նախկին Խորհրդային Միության քաղաքական և տնտեսական համակարգերի քայքայման և դրա պատճառների մասին խորը և համապարփակ ուսումնասիրություն է Եգոր Գայդարի *Гибель империи: уроки для современной России* / Егор Гайдар. - 2-е изд., испр. и доп. - М. : РОССПЭН, 2007. - 447 с. գիրքը, որը թարգմանվել է նաև հայերեն:

Մարդիկ, ապրանքները, ծառայությունները և ռեսուրսները ավելի արագ և պակաս արգելքներով հատում են ազգային պետությունների սահմաններն, ինչն էլ ապրանքների, ծառայությունների և ռեսուրսների առաջարկի և պահանջարկի համաշխարհային հավասարակշռության պայմանն է»¹:

Սակայն միշտ չէ, որ պահպանվում է վերը նշված սկզբունքը: Այն շեղվում է տարածաշրջանային ֆորս-մաժորային հանգամանքներից ելնելով, որի օրինակ կարող է հանդիսանալ 2022թ.-ի փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական հակամարտությունը, որը նաև Ռուսաստանի կողմից աշխարհաքաղաքական նոր կառուցվածքի մեջ նախկին Խորհրդային Միության վերատեղեման, կամ առնվազն իր տնտեսական ազդեցությունը պահպանելու/ընդլայնելու փորձերից է:

ՀՀ տնտեսությունում ձևավորված համամասնությունների վերլուծության կարևոր ուղղություններից է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) օգտագործման կառուցվածքի դիտարկումը, որի հիմնական բաղկացուցիչներն են վերջնական սպառմանն ուղղված ծախսերը, համախառն կուտակումը ու ապրանքների և ծառայությունների գուտ արտահանումը: Այլ կերպ ասած, եկամուտների օգտագործման եղանակով (ծախսային եղանակ) ՀՆԱ-ի հաշվարկման բանաձևը ունի հետևյալ տեսքը.

$$\text{ՀՆԱ} = \text{ՎՄ} + \text{ՀԿ} + (\text{Ա}-\text{Ն})^2,$$

որտեղ՝ ՎՄ - ն՝ վերջնական սպառումն է, ՀԿ - ն՝ համախառն կուտակումը, Ա - ն՝ արտահանումը, Ն - ն՝ ներմուծումը:

Տվյալների վերլուծությունից հետևում է, որ ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառմանն ուղղված ծախսերը 1990-1995 թթ. աճել են՝ 66.3%-ից հասնելով մինչև 117.4%-ի, ինչը նշանակում է սպառման ծավալների աճ նախկինում կուտակված խնայողությունների հաշվին: 1996 թ. սկսած՝ իրավիճակն այս մասով որոշակիորեն բարելավվել է, քանի որ թեև 2000թ.-ին 1995թ.-ի համեմատությամբ վերջնական սպառումը գրեթե կրկնապատկվել է, սակայն ՀՆԱ-ի վերջնական օգտագործման կառուցվածքում նրա բաժինը նվազել է՝ հասնելով 108.9%-ի, ինչը 1995թ.-ի ցուցանիշի մեծության նման ավելի շատ տնտեսական շեղում է այն պարզ պատճառով, որ հասարակությունն ավելի շատ սպառում է, քան թողարկում (օգտագործում):

Հանրապետությունում վերջնական սպառման ծախսերի բաժինը ՀՆԱ-ում նկատելիորեն բարելավվել է սկսած 2005թ.-ից, երբ այդ ցուցանիշը կազմել է ՀՆԱ-ի մեծության 86.0%-ը, որը սակայն 2010թ.-ին նորից աճել և հասել է 95.0%-ի, որը որոշ չափով նվազել է մինչև 2018թ.-ը, սակայն 2019թ.-ին կրկին ավելացել է՝ հասնելով 96.0%-ի: Հաջորդ տարիներին վերջնական սպառման ծախսերը

¹ Багратян Г.А., Мегээкономика и глобальные экономические проблемы. Учебно-методическое пособие. Ер.: Издательство РАУ, 2013г., стр. 8.

² Տե՛ս Հայաստանի ազգային հաշիվները, 2023, Եր., ՀՀ ՎԿ, 2023թ., էջ 217, էլեկտրոնային ռեսուրսի հղումը՝ <https://armstat.am/am/?nid=82&id=2609>

ՀՆԱ-ի կազմում կրկին նվազել են՝ 2021թ.-ին հասնելով 87.8%-ի: Նման ցուցանիշներով հանդերձ, պետք է նշել, որ ՀՆԱ-ի վերջնական սպառման կառուցվածքում սպառման ծախսերը դեռևս հեռու են բավարար համարվելուց, քանի որ հանրապետությունում ստեղծված եկամտի շուրջ 90 տոկոսի սպառումը նշանակում է տնտեսության վերարտադրական հնարավորությունների խիստ ցածր մակարդակ, կամ այլ կերպ ասած այսօրվա սպառումը արվում է հետագա զարգացման (ապագայի) տնտեսական աճի հաշվին: ՀՆԱ-ի նման ձևով վերջնական օգտագործումը ձեռք է բերվել ռեսուրսների կուտակման հաշվին, քանի որ համախառն կուտակման ցուցանիշը 1990թ.-ի 47.1%-ի փոխարեն 1995թ.-ին կտրուկ անկում է ունեցել՝ հասնելով 18.4%-ի, ինչը ուսումնասիրված ամբողջ ժամանակահատվածի ամենացածր ցուցանիշներից է եղել, հաջորդ ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2019թ.-ին (17.4%): Այն 2000-ից 2010թ.-ին հասել է իր գագաթնակետին (32.8%), որից հետո կայունացել է 20%-ի շրջակայքում, գրանցելով աճի միտում հաջորդ երկու տարիների ընթացքում: Անցած շուրջ երեք տասնամյակների ընթացքում ՀՆԱ-ի վերջնական օգտագործման կառուցվածքի առանձին բաղադրիչների (վերջնական սպառման և համախառն կուտակման) վերլուծությունը հանգեցնում է այն մտքին, որ նշված ժամանակահատվածում խախտվել են տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող մակրոտնտեսական օրինաչափությունները, որոնք ապահովում են պետության և հասարակության կայուն և համաչափ զարգացումը, դրանով իսկ ապահովելով տնտեսական անվտանգության այնպիսի ցուցանիշների մեծությունների շեմային (անվտանգ) արժեքները, որոնք ընդունված են միջազգային պրակտիկայում: Խոսքը ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառման ցուցանիշի 60%-անոց շեմի մասին է, իսկ համախառն կուտակման մակարդակի 25%-ի (ՀՆԱ-ի նկատմամբ), որոնց պահպանումը կարող է ապահովել երկրի սրընթաց զարգացումը և բնակչության բարեկեցության աճը:

ՀՆԱ-ի վերջնական օգտագործման կարևոր բաղադրիչն է նաև ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման ցուցանիշը (դրանց արտահանման և ներմուծման տարբերությունը): Այս ցուցանիշը ուղղակի ազդեցություն ունենալով ՀՆԱ-ի մեծության և դրա աճի վրա, բնութագրում է պետության տնտեսության կախվածության աստիճանը արտաքին աշխարհից կամ արտաքին շուկաներից: Ընդ որում, եթե զուտ արտահանումը դրական մեծություն է, ինչը խիստ ցանկալի է երկրի համար, ապա դա նշանակում է աշխարհի մյուս երկրներն են ձեռք վճարում ավելի շատ ձեռք ապրանքների և ծառայությունների համար, քան դուք նրանց: Այդպիսի մոտեցումը ապահովում է երկրի ՀՆԱ-ի ավելացումը և աճը, մինչդեռ հակառակ դեպքում, երբ զուտ արտահանումը ունի բացասական նշան, ապա այն վկայում է, որ ձեռք երկիրն է վճարում մյուս երկրների տնտեսավարող սուբյեկտներից ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման համար, դրանով իսկ վատթարացնելով երկրի վճարային հաշվեկշռի «ընթացիկ հաշվի» մեծությունը: Այս տարբերությունը իր մեծության

չափով փոփոխում է (տվյալ դեպքում՝ նվազեցնում է) պետության ՀՆԱ-ի մեծությունը: Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման ցուցանիշը ուսումնասիրության ողջ ժամանակահատվածում ամենամեծ տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում ունեցել է 1995թ.-ին՝ հասնելով -38.2%-ի, որից հետո այն աստիճանաբար և շարունակաբար նվազել է 2021թ.-ին հասնելով իր նվազագույն արժեքին՝ -8.5%, ինչը անկասկած կարևոր ձեռքբերում է: Այդպիսի դրական միտումը հատկապես ակնհայտ է 2018-2021թթ. ընթացքում, երբ ապրանքների և ծառայությունների զուտ արտահանումը ՀՆԱ-ի վերջնական օգտագործման կառուցվածքում 2018թ.-ի -13.7%-ից 2021թ.-ին հասավ -8.5%-ի, այդպիսով նվազումը կազմեց 5.2 տոկոսային կետ¹:

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ 1990-2000թթ. ընթացքում բոլոր ցուցանիշները բացարձակ արժեքների փոփոխությունները նշանակալի են եղել՝ հազարավոր անգամներ, սակայն ինչ վերաբերում է տեսակարար կշիռներին, ապա 2000թ.-ին 1990-ի համեմատ դիտարկվել է համախառն կուտակման ցուցանիշի զգալի անկում՝ ընդամենը 39.5%-ի չափով: Վերջնական սպառման ծախսերը բոլոր ժամանակահատվածներում 80%-ից ավելի են եղել:

Աղյուսակ 1

ՀՀ ՀՆԱ-ի վերջնական օգտագործումը և դրա բաղադրիչների մեծությունների կառուցվածքի փոփոխությունները 1990-2021թթ.²

	2000թ. 1990թ.-ի նկատմամբ, %	2010թ. 2000թ.-ի նկատմամբ, %	2021թ. 2010թ.-ի նկատմամբ, %	2021թ. 2000թ.-ի նկատմամբ, %
1. ՀՆԱ, ընթացիկ գներով	10211.9	335.5	201.8	677.0
	100.0	100.0	100.0	100.0
2. Վերջնական սպառման ծախսեր	16768.7	292.8	186.4	545.7
	162.8	87.2	92.4	80.6
3. Համախառն կուտակում	4091.5	591.4	127.0	751.3
	39.5	176.3	63.1	111.3
4. Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում	25472.7	302.4	70.0	211.7
	239.8	90.4	34.7	31.4

Ծանոթագրություն. համարիչում՝ ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ, հայտարարում՝ %-ով ՀՆԱ-ի նկատմամբ:

¹ Հայաստանի ազգային հաշիվներ 2022, Եր., ՀՀ ՎԿ, 2022, էջ 44-45, Հայաստանի ազգային հաշիվներ 2019, Եր., ՀՀ ՎԿ, 2019, էջ 63-64, Հայաստանի ազգային հաշիվներ 2014, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 59, Հայաստանի ազգային հաշիվներ 2007, Եր., ՀՀ ԱՎԾ, 2007, էջ 58, Հայաստանի ազգային հաշիվները 1990-2001, Եր., ՀՀ ԱՎԾ, 2003, էջ 36:

² ՀՀ վիճակագրական կոմիտեի նույն աղբյուրները:

Պետության ազգային հարստությունը լավագույնս է բնութագրում այս կամ այն ազգի ինչպես ֆինանսական, այնպես էլ մտավոր (հոգևոր) հնարավորություններն ու կարողությունները, ձևավորված արտադրական ներուժն ու արտադրական հնարավորությունները, իսկ եթե ավելի կարձակակերպենք, ապա՝ ազգի մշակույթը ստեղծելու բարիքներ (ապրանքներ, ծառայություններ, աշխատանք): Այդ գործընթացն ամենից առաջ պայմանավորված է ազգային հարստության ստեղծման գործոնների մեծությամբ (արժեքով) ու դրանց օգտագործման արդյունավետության աստիճանով: Բարիքների արտադրության կազմակերպման և արժեստեղծման գործում առաջնային կարևորություն ունի ազգային հարստության բաղկացուցիչների միջև այնպիսի հարաբերակցության ստեղծումը, որը կապահովի դրանց առավելագույն արդյունավետությունը և, հետևաբար, բարիքների ստեղծման գործում կապահովի ընդգրկված կապիտալի նվազագույն չափերով օգտագործում միավոր բարիքի թողարկման հաշվով: Ներկայումս ընդունված դասակարգման համաձայն ազգային հարստությունը բաղկացած է արտադրված, մարդկային, բնական (վերականգնվող և չվերականգնվող) կապիտալներից և արտաքին զուտ ակտիվներից¹: Նշված արժեստեղծման գործոնների արդյունքը ժամանակի յուրաքանչյուր միավորի (ժամ, շաբաթ, ամիս, տարի և այլն) հաշվով ձևավորվում է ՀՆԱ-ի կամ մեկ այլ մակրոտնտեսական ցուցանիշների (օրինակ, ազգային եկամտի կամ համախառն զուտ արդյունքի) միջոցով կամ, այլ կերպ ասած, ազգային հարստության աճի աղբյուրը ՀՆԱ-ն է, որի աճի ապահովումը երաշխիք է ստեղծում բնակչության բարեկեցության բարձրացման ու պետության ներքին և արտաքին անվտանգության ապահովման համար: Ըստ որում, ՀՆԱ-ի մեծությունը ձևավորվում է վերջնական սպառման, համախառն կուտակման և զուտ արտահանման հանրագումարով: Վերջինս իրենից ներկայացնում է ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման տարբերությունը և եթե այդ տարբերությունը դրական է, ապա ՀՆԱ-ն ավելանում է, և ընդհակառակը: Վերջին հաշվով զուտ արտահանման ցուցանիշի մեջ խտանում է ինչպես միկրո- և մակրո- մակարդակում իրականացվող քաղաքականության արդյունավետությունը, այնպես էլ ազգային քաղաքականության և մեզաէկոնոմիկայի փոխառնչությունները: Զուտ արտահանման մեծության ավելացման համար գոյություն ունի երկու ուղի. Առաջինը, արտահանման ավելացումը և երկրորդը՝ ներմուծման նվազեցումը: Ասվածի տեսանկյունից մտահոգիչ են Հայաստանի Հանրապետությունից արտահանման ծավալների և դրանց կառուցվածքի կենտրոնացվածությանն ու արտաքին առևտրաշրջանառության մեջ արտահանման մասնաբաժնին վերաբերող տվյալները: Վիճակագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, օրինակ, եթե 2009թ.-ին հանրապետության զուտ արտահանումը

¹ The Changing Wealth of Nations 2021. Managing Assets for the Future, WB, 2021, 458 pages.
Էլեկտրոնային ռեսուրսը տե՛ս <https://openknowledge.worldbank.org/handle/10986/36400> հղմամբ (ղիմելու ամսաթիվը 05.10.2023թ.):

բացասական է եղել՝ կազմելով -2610.9 մլրդ ԱՄՆ դոլար, 2010թ.-ին՝ -2707.8 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2003-2010թթ.-ին Հայաստանի Հանրապետության արտահանման ծավալը տատանվել է մեկ մլրդ ԱՄՆ դոլարի շրջակայքում (2009թ.-ին արտահանումը նվազեց և ձևավորվեց վերջին տարիների արտահանման ամենացածր մակարդակը, երբ այն մոտեցավ 710.2 մլն ԱՄՆ դոլարի սահմանագծին), ապա 2022թ.-ին արտահանումը կազմել է 5419.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 8775.9 մլն դոլար, կամ զուտ արտահանումը կազմել է -3356.8 մլն ԱՄՆ դոլար՝ այդպիսով կազմելով 2022թ.-ի ՀՆԱ-ի (19514 մլն դոլար) 17.2%-ը: Այդ ցուցանիշների միջին տարեկան մեծությունները 2000-2022թթ. համար կազմել են, համապատասխանաբար՝ 1554.9 մլն, 3529.1 մլն ԱՄՆ դոլար, - 1974.2 մլն ԱՄՆ դոլար և 16.9%: Նման իրավիճակը այն բանի հետևանք է, որ ՀՆԱ-ի մեջ ցածր է արտահանման մասնաբաժինը, որը 2003-2009թթ. ժամանակահատվածում ունեցել է անկման միտում: Այսպես 2003թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 24.4%, 2004թ.-ին՝ 20.2%, 2005թ.-ին՝ 19.9%, 2006թ.-ին՝ 15.4%, 2007թ.-ին՝ 12.5%, 2008թ.-ին՝ 9.1%, 2009թ.-ին՝ 8.2%, 2010թ.-ին՝ 11.2%: Ասվածից հետևում է, որ արտահանման հարաբերակցությունը ՀՆԱ-ին ցածր է և 2010թ.-ին 2003թ.-ի համեմատ այդ ցուցանիշը նվազել է ավելի քան երկու անգամ (թեև 2010թ.-ին արտահանման աճի տեմպը նախորդ տարվա համեմատ կազմել է 146.6%-ով, իսկ ներմուծմանը՝ 112.9%): Այդ ժամանակահատվածում շարունակվել է արտահանման ռեսուրսա-ինտենսիվության աճը՝ շնորհիվ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արագ աճի, ինչպես նաև բարձր է եղել արտահանման կենտրոնացվածության աստիճանը. 3 հիմնական արտադրանքների (մետաղներ, ալյումինիումի խմիչքներ և ադամանդ) խումբն ապահովում էր արտահանման 70% -ից ավելին, որի կշիռն ուներ աճի միտում (2010թ.-ին՝ 77.1%):

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2000-2022թթ.-ին ՀՀ ՀՆԱ-ն (դոլարային արտահայտությամբ) ավելացել է 1020%-ով (19514/1912), արտաքին առևտրաշրջանառությունը՝ 1197.6%-ով (14195.0/1185.2), այդ թվում՝ արտահանումը՝ 1803.4%-ով (5419.1/300.5), իսկ ներմուծումը՝ 991.9%-ով (8775.9/884.7)¹:

Նկատենք, որ բացարձակ արժեքով, եթե 2018թ.-ին ՀՀ ներմուծման ծավալը գերազանցել է արտահանման ծավալը 2562.4 մլն ԱՄՆ դոլարով (4975.2 մլն ԱՄՆ դոլար - 2412.8 մլն ԱՄՆ դոլար), ինչը նշանակում է, որ 2018թ.-ին ՀՀ զուտ արտահանման մեծությունը գերազանցել է արտահանման բացարձակ արժեքին, ապա 2022թ.-ին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 3356.8, 8775.9 և 5419.1 մլն ԱՄՆ դոլար: Հետաքրքիր է նաև նկատել, որ ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2018թ.-ին ԱՊՀ երկրների հետ կազմել է ընդհանուր ապրանքաշրջանառության 30.0%-ը, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրների հետ՝ 27.0%-ը, Եվրամիության երկրների հետ՝ 24.8%-ը, իսկ այլ երկրների հետ՝ 45.2%-ը: ՀՀ

¹ ՀՀ վիճակագրական կոմիտեի ժամանակագրական շարքերի՝ <https://www.armstat.am/am/?nid=12> տվյալներով:

առևտրի հաշվեկշիռը 2018թ.-ին նշված երկրների հետ կազմել է, համապատասխանաբար՝ -771.8 մլն ԱՄՆ դոլար, -611.5 մլն ԱՄՆ դոլար, -462.4 մլն ԱՄՆ դոլար և -1317.1 մլն ԱՄՆ դոլար, կամ ընդամենը՝ -2551.3 մլն ԱՄՆ դոլար¹: Այդ ցուցանիշները 2021 և 2022թ.-ին միայն ավելացել են, և 2021թ.-ին առևտրաշրջանառության ընդհանուր ծավալում ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը կազմել է 35.1%, իսկ 2022թ.-ին՝ 38.4%, որից ԵԱՏՄ երկրների հետ համապատասխանաբար՝ 32.6% և 37.3%:

Ինչ վերաբերում է Եվրամիության երկրներին, ապա դրանց հետ առևտրաշրջանառության ծավալները կրճատվել են և 2021թ.-ին կազմել են ընդամենը առևտրաշրջանառության 19.0% և 16.2%-ը, այլ երկրների հետ համապատասխանաբար՝ 45.9% և 45.4%: Ընդ որում, այլ երկրների շարքում նշանակալի է Չինաստանի (2021թ.՝ 15.0%, 2022թ.՝ 12.4%) և Իրանի Իսլամական Հանրապետության (2021թ.՝ 6.0%, 2022թ.՝ 5.0%) տեսակարար կշիռը: ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրի հաշվեկշիռը վերջին երկու տարիներին շարունակել է բացասական մնալ, սակայն 2022թ.-ին 2021թ.-ի համեմատ բավականաչափ բարելավվել է, մասնավորապես ԱՊՀ և ԵԱՏՄ բացասական հաշվեկշիռը նվազել է ավելի քան 3 անգամ, 2021թ.-ին ԱՊՀ երկրների հետ -1084.3 մլն ԱՄՆ դոլարից 2022թ.-ին կազմելով -322.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ ԵԱՏՄ երկրների հետ՝ -968.6 մլն ԱՄՆ դոլարից հասնելով -247.3 մլն ԱՄՆ դոլար: Եվրամիության երկրների դեպքում պատկերը ճիշտ հակառակն է եղել, 2022թ.-ին 2021թ.-ի համեմատ արտաքին և փոխադարձ առևտրի հաշվեկշիռի բացասական արժեքը ավելացել է շուրջ 3 անգամ՝ 2021թ.-ի -274.4 մլն ԱՄՆ դոլարից 2022թ.-ին դառնալով -736.9 մլն ԱՄՆ դոլար²:

Այսպիսով, կատարված վերլուծությունը մեկ անգամ ևս ապացուցում է, որ արտաքին շուկաները էական ազդեցություն են թողնում ՀՆԱ-ի, որպես երկրի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշի, մեծության և դրա աճի տեմպերի վրա, ինչն էլ տնտեսական քաղաքականություն մշակողներից պահանջում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ՀՆԱ-ի կառուցվածքին՝ երկրի սոցիալ-տնտեսական, տարածաշրջանային և գլոբալ նշանակություն ունեցող ծրագրերի և զարգացման քաղաքականության մշակման ու իրականացման ընթացքում:

Պետության տնտեսական վիճակը բնութագրող հիմնական աղբյուրներից է վճարային հաշվեկշիռը, որտեղ համակարգված տեսքով ամփոփ տվյալներ են արտացոլվում որոշակի ժամանակաշրջանում այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ երկրի արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ: Այսինքն՝ վճարային հաշվեկշիռը բնութագրում է արտաքին

¹ Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., էջ 127:

² Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2023թ., էջ 151-152:

աշխարհի հետ երկրի փոխառնչությունները: Պետք է նկատել, որ վճարային հաշվեկշռի բաղկացուցիչները պատկերացում և քանակական գնահատական են տալիս այն գործարքների վերաբերյալ, որոնք ձևավորում և ամբողջացնում են վճարային հաշվեկշիռը և նրա հաշվեմնացորդի մեծությունը: Ըստ էության, վճարային հաշվեկշիռը տվյալ երկրի արտադրության միջոցների (ապրանքներ և ծառայություններ), դրամական փոխանցումների (տրանսֆերտներ), կապիտալի և ֆինանսական հոսքերի շարժն ու կառուցվածքի փոփոխությունն է աշխարհի մյուս երկրների հետ: Վճարային հաշվեկշռում գրանցվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև իրականացված բոլոր գործառնությունները, որոնք վերաբերում են ապրանքներին, ծառայություններին, սկզբնական և երկրորդային եկամուտներին, կապիտալ տրանսֆերտներին, չարտադրված ոչ ֆինանսական ակտիվներին, ֆինանսական ակտիվներին և պարտավորություններին¹:

Վճարային հաշվեկշիռը կառուցվում է հաշվապահական հաշվառման հետևյալ սկզբունքով. ամեն մի գործառնություն գրանցվում է կրկնակի՝ որևէ հաշվի կրեդիտում և մեկ այլ հաշվի դեբետում: Վճարային հաշվեկշիռը կազմված է երեք հիմնական հաշիվներից՝ ընթացիկ հաշվից, կապիտալի հաշվից և ֆինանսական հաշվից: Ընթացիկ հաշվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, սկզբնական և երկրորդային եկամուտների, կապիտալի հաշվում՝ կապիտալ տրանսֆերտների, չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների, իսկ ֆինանսական հաշվում՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները: Մեթոդաբանական առումով ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդը, բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, ինչը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել «մաքուր սխալների և բացթողումների» հոդված²:

Ըստ էության, վճարային հաշվեկշիռը երկկողմանի պատկեր է տալիս նշված բաղկացուցիչների վերաբերյալ, քանի որ հաշիվները ձևավորվում են երկկողմանի (կամ բազմակողմանի) փոխհարաբերությունների արդյունքում, և այդ իմաստով դրանցից յուրաքանչյուրը յուրօրինակ հաշվեկշիռ է այդ փոխառնչությունների վերաբերյալ: Վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածները բնութագրում են տվյալ երկրի տնտեսության ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը, ինչից պետք է հետևի երկրի տնտեսական քաղաքականության հիմնախնդիրների և դրանց լուծման վերաբերյալ միջոցների ու ճանապարհային քարտեզի մշակումը և իրականացումը: Վճարային հաշվեկշռի մնացորդը լրիվ և ամբողջական պատկեր է տալիս երկրի ֆինանսական վիճակի մասին, այն առումով, որ եթե հաշվեմնացորդը դրական է, ապա տնտեսության և երկրի վիճակը բարելավվում է, քանի որ վճարային հաշվեկշռի «մուտքի և ելքի» տարբերությունը ավելացնում է երկրի ՀՆԱ-ն և, հետևաբար, մեծանում են երկրի և նրա քաղա-

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, Եր., ՀՀ ՎԿ, 2022թ., էջ 505:

² Նույն տեղում, էջ 506:

քացիների բարեկեցության ավելացման հնարավորությունները, և ընդհակառակը:

ՀՀ վճարային հաշվեկշռի և դրա կառուցվածքի ուսումնասիրությունը՝ 1995-2022թթ տվյալներով, ցույց է տալիս, որ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մեծությունը (բացառությամբ 2022թ.-ի) եղել է բացասական, ինչը վկայում է ՀՀ տնտեսության «աքիլեսյան գարշապարի» հիմնախնդրի լուծված չլինելու մասին:

2022թ.-ին ընթացիկ հաշվի տարեկան դրական մնացորդը կազմել է 151.0 մլն ԱՄՆ դոլար, ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերությունը՝ 0.9%: Նախորդ տարվա ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ - 483.0 մլն դոլար և -3.7%: Ըստ էության, 2022 թվականը առաջին տարին էր, երբ ՀՀ վճարային հաշվեկշիռը (դրա հաշվեմնացորդը) դրական է եղել, որտեղ նշանակալի ներդրում ունեցավ ծառայությունների ոլորտը (ճանապարհորդություն, շինարարություն, ֆինանսական ծառայություններ, հեռահաղորդակցություն, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն):

2023թ.-ի առաջին եռամսյակի տվյալներով ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 351.4 մլն ԱՄՆ դոլար, որը 2022թ.-ի հունվար-մարտի համեմատ աճել է 168.5 մլն դոլարով: Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը 2023թ. հունվար-մարտին կազմել է -7.6%, նախորդ տարվա հունվար-մարտի -6.0%-ի փոխարեն:

Ընթացիկ հաշվի պակասուրդի հիմնական մասը ապրանքների բացասական հաշվեկշիռն է, որը 2023թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 283.4 մլն դոլարով՝ 393.2 մլն դոլարից հասնելով 676.7 մլն դոլար:

«Ծառայություններ» հոդվածի գծով 2023թ. հունվար-մարտ ամիսներին արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 116.9%-ով, իսկ ներմուծումը՝ 102.0%-ով, արդյունքում «Ծառայություններ» հոդվածի գծով արձանագրվել է 466.2 մլն ԱՄՆ դոլարի դրական մնացորդ, նախորդ տարվա 189,7 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Հարկ է նշել, որ ծառայությունների բնագավառում ծավալների հիմնական աճ արձանագրվել է «Ճանապարհորդություն» հոդվածի գծով (արտահանման 135.1% աճ, ներմուծման՝ 156.4%):

Ծառայությունների հոդվածի գծով 2023թ. հունվար-մարտին հիմնականում դրական մնացորդ է արձանագրվել «Հեռահաղորդակցություն, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ» (236.3 մլն դոլար), «Ճանապարհորդություն» (288.2 մլն ԱՄՆ դոլար) «Շինարարություն» (12.0 մլն ԱՄՆ դոլար) հոդվածների գծով¹:

¹ «ՀՀ վճարային հաշվեկշիռը 2023 թվականի հունվար-մարտին», էջ 7, տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> հղմամբ, ղիտվել է 07.10.2023թ.

Գիտական նորույթ: Հոդվածում ուսումնասիրվել և բացահայտվել են ՀՀ արտաքին տնտեսական գործունեության երկարաժամկետ ռազմավարության հիմնական օրինաչափությունները և զարգացումները՝ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունների հիման վրա: Կատարվել է պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը բնութագրող այնպիսի գործիքի ուսումնասիրությունը, ինչպիսին վճարային հաշվեկշիռն է: Բացահայտվել են 1990-2022թթ. արտաքին տնտեսական գործունեության ռազմավարության բացասական կողմերը:

Եզրակացություն: Վճարային հաշվեկշռի երկարաժամկետ կտրվածքով ուսումնասիրությունը վկայում է, որ ընթացիկ հաշիվը ՀՀ անկախության ամբողջ ժամանակահատվածում (բացառությամբ 2022թ.-ի) ունեցել է բացասական մեծություն և ազդեցություն վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի վրա, ինչը հետևանք է արտահանման նկատմամբ ապրանքների և ծառայությունների գերազանցման: Այդպիսի իրավիճակը պահանջում է ՀՀ տնտեսության մեջ որակական բարեփոխումների իրականացում, որը պետք է ձեռք բերել ներմուծման նկատմամբ արտահանման ծավալների առաջանցիկ աճով, տնտեսության կառուցվածքի բարելավմամբ և արդյունավետ տնտեսական բարեփոխումներով:

Հետազոտության արդյունքներից հետևում է, որ ՀՀ տնտեսությունը կարիք ունի արմատական վերափոխումների և արդիականացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և տնտեսության կառավարման բարելավման:

Օգտագործված գրականության ցանկ

1. J.E.Cairnes, Some leading principles of political economy newly expounded, New York: Harper and Brothers, 1874, pp 421.
2. Samuelson, P. A. Economics: An Introductory Analysis, 1st ed. New York: McGraw-Hill. 1948.
3. Geoffrey Crowther, Balances and Imbalances of Payments, Boston, Mass.: Harvard University Graduate School of Business Administration, 1957, pp. vii, 70.
4. Никитина М.Г., Буценко И.Н., Селюнина В.С. «Платежный баланс как механизм определения тенденций развития внешнеэкономических связей и индикатор макроэкономического равновесия экономики России», էլեկտրոնային ռեսուրս՝ <https://cyberleninka.ru/article/n/platezhnyy-balans-kak-mehanizm-opredeleniya-tendentsiy-razvitiya-vneshneekonomicheskikh-svyazey-i-indikator-makroekonomicheskogo/viewer>
5. Руководство по платежному балансу и международной инвестиционной позиции. Шестое издание (РПБ6), МВФ, 2009, 440 стр. էլեկտրոնային ռեսուրս՝ <https://www.imf.org/external/russian/pubs/ft/bop/2007/bopman6r.pdf>

6. Гайдар Е. Гибель империи: уроки для современной России / Егор Гайдар. - 2-е изд., испр. и доп. - М. : РОССПЭН, 2007. - 447 с.
7. Багратян Г.А., Мегаэкономика и глобальные экономические проблемы. Учебно-методическое пособие. Ер.: Издательство РАУ, 2013г.
8. Հայաստանի ազգային հաշիվները, 2023, Եր., ՀՀ ՎԿ, 2023թ., էջ 217, Էլեկտրոնային ռեսուրսի հղումը՝ <https://armstat.am/am/?nid=82&id=2609>
9. Հայաստանի ազգային հաշիվները, 2022, Եր., Հայաստանի ազգային հաշիվները, 2019, Հայաստանի ազգային հաշիվները, 2014, Հայաստանի ազգային հաշիվները, 2007, Հայաստանի ազգային հաշիվները 1990-2001թթ. ՀՀ վիճակագրական կոմիտե, www.armstat.am
10. The Changing Wealth of Nations 2021. Managing Assets for the Future, WB, 2021, 458 pages. Էլեկտրոնային ռեսուրս՝ <https://openknowledge.worldbank.org/handle/10986/36400>
11. ՀՀ վիճակագրական կոմիտեի ժամանակագրական շարքեր, Էլեկտրոնային ռեսուրս՝ <https://www.armstat.am/am/?nid=12>
12. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., www.armstat.am
13. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2023թ., www.armstat.am
14. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, Եր., ՀՀ ՎԿ, 2022թ., www.armstat.am
15. «ՀՀ վճարային հաշվեկշիռը 2023 թվականի հունվար-մարտին», Էլեկտրոնային ռեսուրսը ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

References

1. J.E.Cairnes, Some leading principles of political economy newly expounded, New York: Harper and Brothers, 1874, pp 421.
2. Samuelson, P. A. Economics: An Introductory Analysis, 1st ed. New York: McGraw-Hill. 1948.
3. Geoffrey Crowther, Balances and Imbalances of Payments, Boston, Mass.: Harvard University Graduate School of Business Administration, 1957, pp. vii, 70.
4. Nikitina M.G., Bucenko I.N., Seljunina V.S. «Platezhnyj balans kak mehanizm opredeleniya tendencij razvitija vneshneekonomicheskikh svyazey i indikator makroekonomicheskogo ravnovesija jekonomiki Rossii», Էլեկտրոնային ռեսուրս՝ <https://cyberleninka.ru/article/n/platezhnyy-balans-kak-mehanizm-opredeleniya-tendentsiy-razvitiya-vneshneekonomicheskikh-svyazey-i-indikator-makroekonomicheskogo/viewer>
5. Rukovodstvo po platezhnomu balansu i mezhdunarodnoj investicionnoj pozicii. Shestoe izdanie (RPB6), MVF, 2009, 440 str. Էլեկտրոնային ռեսուրս՝

<https://www.imf.org/external/russian/pubs/ft/bop/2007/bopman6r.pdf>

6. Gajdar E. Gibel' imperii: uroki dlja sovremennoj Rossii / Egor Gajdar. - 2-e izd., ispr. i dop. - M. : ROSSPJeN, 2007. - 447 s.
7. Bagratjan G.A., Megajekonomika i global'nye jekonomicheskie problemy. Uchebno-metodicheskoe posobie. Er.: Izdatel'stvo RAU, 2013g.
8. Hayastani azgayin hashivnery', 2023, Er., HH VK, 2023t'., e'j 217, e'lektronayin r'esowrsi hghowmy'` <https://armstat.am/am/?nid=82&id=2609>
9. Hayastani azgayin hashivnery', 2022, Er., Hayastani azgayin hashivnery', 2019, Hayastani azgayin hashivnery', 2014, Hayastani azgayin hashivnery', 2007, Hayastani azgayin hashivnery' 1990-2001t't'. HH vitwakagrakan komite, www.armstat.am
10. The Changing Wealth of Nations 2021. Managing Assets for the Future, WB, 2021, 458 pages. <https://openknowledge.worldbank.org/handle/10986/36400>
11. HH vitwakagrakan komitei jhamanakagrakan sharqer, e'lektronayin r'esowrs'` <https://www.armstat.am/am/?nid=12>
12. Hayastani Hanrapetowt'yan social-tntesakan vitwaky' 2018 t'vakani hownvar-dektemberin, Er., HH VK, 2019t'., www.armstat.am
13. Hayastani Hanrapetowt'yan social-tntesakan vitwaky' 2022 t'vakani hownvar-dektemberin, Er., HH VK, 2023t'., www.armstat.am
14. Hayastani vitwakagrakan taregirq 2022, Er., HH VK, 2022t'., www.armstat.am
15. «HH vtwarayin hashvekshir'y' 2023 t'vakani hownvar-martin», e'lektronayin r'esowrsy' HH kentronakan banki pashtonakan kayqe'jowm'` <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշոտ Խաչատուրի Մարկոսյան Էլյանորա Նորայրի Մաթևոսյան

Համառոտագիր: Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական քաղաքականության ռազմավարությունը կառուցված է եղել, համենայնդեպս այդպես է հռչակվել վերջին տասնամյակների համար ընդունված գրեթե բոլոր ծրագրերում, ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի ապահովման սկզբունքի վրա: Սակայն, ինչպես վկայում է անցած շուրջ 30 տարիների փորձը, այդ սկզբունքը չի իրացվել ամբողջությամբ: Մասնավորապես, արտաքին տնտեսական գործունեության հաջողվածության հիմնական ցուցիչը համարվող վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը ուսումնասիրվող ամբողջ ժամանակահատվածում (բացառությամբ 2022թ.-ի) բացասական է եղել, ինչը նշանակում է,

որ ՀՀ-ն գերազանցապես ներմուծող երկիր է հանդիսացել: Ստեղծված իրավիճակը պահանջում է ՀՀ տնտեսության որակական բարեփոխումների իրականացում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում արտաքին տնտեսական գործունեության իրականացման երկարաժամկետ արդյունքները՝ վերլուծելով վճարային հաշվեկշռի և դրա հաշիվների իրավիճակը և դինամիկան, ինչպես նաև ամփոփումներ ներկայացնել ՀՀ արտաքին տնտեսական գործունեության ռազմավարական նպատակների բարելավման վերաբերյալ: **Հետազոտության խնդիրն է՝** ուսումնասիրել ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքի և ծավալների ցուցանիշների դինամիկան, բացահայտել արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ պատճառները, պարզել ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի հնարավորությունները:

Մեթոդաբանությունը: Հետազոտության իրականացման համար տեսա-մեթոդական հիմք են հանդիսացել արտասահմանյան դասական գիտնականների և ժամանակակից հետազոտողների աշխատությունները, միջազգային կազմակերպությունների կողմից մշակված և կիրառվող ստանդարտները, մեթոդական բնույթի փաստաթղթերը: Վերլուծությունն իրականացվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական հրապարակումներում առկա մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա, երկարաժամկետ դինամիկայի շարքերի կազմման և վերլուծության ճանապարհով:

Ուսումնասիրության մեջ ներկայացվել են երկարաժամկետ հատվածում (շուրջ 30 տարի) ՀՀ արտաքին տնտեսական գործունեության **արդյունքները**՝ հիմնական կտրվածքներով. արտահանման և ներմուծման հարաբերակցությունը, վճարային հաշվեկշռի կառուցվածքային փոփոխությունները, ընթացիկ հաշվի բացասական մեծության պատճառները, ընթացիկ հաշվի փոփոխությունները ազդեցությունը վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի վրա, ինչպես նաև վճարային հաշվեկշռի կապիտալի և ֆինանսական հաշիվների փոփոխությունների դինամիկան և ազդեցությունը վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի վրա:

Հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ մակրոտնտեսական ցուցանիշների և հատկապես վճարային հաշվեկշռի ուսումնասիրության հիման վրա բացահայտվել են ՀՀ արտաքին տնտեսական գործունեության հիմնական օրինաչափությունները:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունը: Հետազոտության մեջ ստացված արդյունքները կարող են կիրառվել ՀՀ-ում արտաքին առևտրի ռազմավարության մշակման գործընթացում:

Բանալի բառեր. տնտեսական աճ, արտահանում, ներմուծում, զուտ արտահանում, արտաքին առևտուր, վճարային հաշվեկշիռ, ընթացիկ հաշիվ, կապիտալի հաշիվ, ֆինանսական հաշիվ:

РЕЗУЛЬТАТЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ ДОЛГОСРОЧНОЙ ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКОЙ СТРАТЕГИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ашот Хачатурович Маркосян
Элянора Норайровна Матевосян

Аннотация. Стратегия внешнеэкономической политики Республики Армения строилась (по крайней мере, так декларировалось практически во всех программах правительства, принятых за последние десятилетия) на принципе обеспечения опережающего роста экспорта над импортом. Однако, как показывает опыт последних 30 лет, этот принцип не был реализован в полной мере. В частности, текущий счет платежного баланса, который считается основным показателем успешности внешнеэкономической деятельности страны, в течении всего исследуемого периода (за исключением 2022 года) был отрицательным, а это означает что Республика Армения была страной-импортером. Создавшаяся ситуация требует проведения качественных реформ в экономической политике РА.

Целью исследования является изучение долгосрочных результатов внешнеэкономической деятельности в РА, анализ состояния и динамики изменений счетов платежного баланса, а также представление рекомендаций относительно улучшения стратегических целей во внешнеторговой деятельности РА. **Задачей исследования** является изучение динамики показателей структуры и объемов экспорта и импорта РА, выявление причин увеличения объемов импорта над экспортом, выявление возможностей обеспечения роста экспорта с целью обеспечения положительного чистого экспорта.

Теоретико-методологической основой исследования стали работы зарубежных ученых и современных исследователей, разработанные и применяемые международными организациями стандарты и документы методологического характера. Анализ проведен на основе макроэкономических показателей, опубликованных в официальных сборниках Статистического комитета РА, методом исследования является построение и анализ долгосрочных рядов динамики.

В исследовании представлены **результаты** внешнеэкономической деятельности РА в долгосрочной перспективе (около 30 лет) по следующим основным критериям: соотношение объемов экспорта и импорта, структурные изменения в платежном балансе, причины отрицательного значения текущего счета, влияние изменений текущего счета на отрицательное сальдо платежного баланса, а также динамика изменений в счетах операций с капиталом и финансовых счетах платежного баланса и их влияние на платежный баланс страны.

Научная новизна статьи заключается в том, что основываясь на изучении макроэкономических показателей, в частности, платежного баланса выявлены основные закономерности внешнеэкономической деятельности РА.

Возможность применения полученных результатов. Результаты, полученные в исследовании, могут быть использованы в процессе разработки стратегии внешней торговли РА.

Ключевые слова: экономический рост, экспорт, импорт, чистый экспорт, внешняя торговля, платежный баланс, текущий счет, счет операций с капиталом, финансовый счет.

RESULTS OF IMPLEMENTATION OF LONG-TERM FOREIGN ECONOMIC STRATEGY IN THE REPUBLIC OF ARMENIA

Ashot Khachatur Markosyan
Elyanora Norair Matevosyan

Abstract. The foreign economic policy strategy of the Republic of Armenia was built, at least as was declared in almost all government programs adopted over the past decades, on the principle of ensuring faster growth of exports over imports. However, as the experience of the last 30 years shows, this principle has not been fully implemented. In particular, the current account of the balance of payments, which is considered the main indicator of the success of the country's foreign economic activity, was negative throughout the entire period under study (except for 2022), which means that the Republic of Armenia was an importing country. The current situation requires qualitative reforms of the RA economy.

The aim of the research is to study the long-term results of foreign economic activity in the Republic of Armenia, analyze the state and dynamics of changes in balance of payments accounts, as well as present recommendations for improving strategic goals in the foreign trade activities of the Republic of Armenia. **The objective** of an article is to study the dynamics of indicators of the structure and volumes of exports and imports of the Republic of Armenia, to identify the reasons for the increase in the volume of imports over exports, and to identify opportunities for ensuring export growth in order to ensure positive net exports.

The theoretical and **methodological** basis of the study was the researches and papers of foreign scientists and modern researchers, standards developed and applied by international organizations, also methodological documents. The analysis was carried out on the basis of macroeconomic indicators published in the official publications of the RA Statistical Committee, by constructing and analyzing long-term dynamics series.

The study presents **the results** of the foreign economic activity of the Republic of Armenia in the long term (about 30 years) according to the following main criteria: the

ratio of exports and imports, structural changes in the balance of payments, the reasons for the negative value of the current account, the impact of changes in the current account on the negative balance of the balance of payments, as well as the dynamics changes in the capital accounts and financial accounts of the balance of payments and their impact on the country's balance of payments.

The scientific novelty of the article lies in the fact that, based on the study of macroeconomic indicators, in particular, the balance of payments, the main patterns of foreign economic activity of the Republic of Armenia have been identified.

Possibility of applying the results obtained. The results obtained in the study can be used in the process of developing the foreign trade strategy of the Republic of Armenia.

Keywords: economic growth, exports, imports, net exports, foreign trade, balance of payments, current account, capital account, financial account.